# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

№ 01/32.1/15/5658-2026
«31» «07» 2026 թ.

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳՎ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ
ՎԱԶԳԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թադևոսյան,

2026 թվականի հուլիսի 25-ին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին) ստացվել է Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտա 6 շենքի 57 բնակարանի բնակիչ Ալեկսանդր Կրաիզի թիվ 2136652 դիմումը՝ Նիկիտա Սիմոնյան փողոցում խոտի այրման վերաբերյալ:

Հիշյալ փաստի առթիվ Տեսչական մարմնի Երևանի տարածքային բաժնում հարուցված վարչական վարույթի շրջանակներում հնարավոր չի եղել պարզել նշված հասցեում այրումն իրականացրած անձին (անձանց):

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով՝ խնդրում եմ հանձնարարել

0009, ՀՀ ք. Երևան, Կորյուն փող. 15
@ecoinspect.gov.am | info@ecoinspect.gov.am
www.ecoinspect.am
+374 15 488 884

համապատասխան ստորաբաժանման աշխատակիցներին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ վերը հիշատակված տարածքում այրում իրականացրած անձին (անձանց) հայտնաբերելու համար՝ Տեսչական մարմնում հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Առդիր՝ 2 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Կատարող՝ Երևանի տարածքային բաժնի*
*փորձագետ՝ Յ.Կարապետյան*
*Հեռ. 015 488 884*